

040.1791.211102

«ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

«21» նոյեմբերի 2002 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ**

19 սեպտեմբերի 2002 թվականի N 1791-Ն

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածին և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.7-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Ստեղծել «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ:

2. «Սոցիալական ծառայության Արարատի տարածքային կենտրոն», «Սոցիալական ծառայության Վեդու տարածքային կենտրոն», «Սոցիալական ծառայության Արտաշատի տարածքային կենտրոն», «Սոցիալական ծառայության Մասիսի տարածքային կենտրոն» պետական հիմնարկները վերակազմավորման ձևով վերակազմակերպել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի Արարատի սոցիալական աջակցության տարածքային գործակալության, Վեդու սոցիալական աջակցության տարածքային գործակալության, Արտաշատի սոցիալական աջակցության տարածքային գործակալության և Մասիսի սոցիալական աջակցության տարածքային գործակալության՝ հիմնարկի առանձնացված ստորաբաժանումների կարգավիճակով:

(2-րդ կետը փոփ. 04.06.15 թիվ 582-Ն որոշում)

3. Հաստատել՝

ա) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի.

բ) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն N 2 հավելվածի.

գ) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը՝ համաձայն N 3 հավելվածի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

(որոշումը փոփ. 29.12.05 թիվ 2337-Ն որոշում)

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ
2002 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-ԻՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
կառավարության 2002 թվականի
սեպտեմբերի 19-ի N 1791-Ն որոշման

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐՈՒՅԹՆԵՐ**

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետը (այսուհետ՝ մարզպետ) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի (այսուհետ՝ մարզպետարան) միջոցով մարզում իրականացնում է պետական կառավարում, իրագործում է Հայաստանի Հանրապետության կառավարության տարածքային քաղաքականությունը, համակարգում է

հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը:

2. Մարզպետարանն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:

3. Մարզպետարանը կազմված է մարզպետից և մարզպետարանի աշխատակազմից: Մարզպետարանի համակարգում ընդգրկվում են պետական ոչ առևտրային կազմակերպություններ, հիմնարկներ և մարզային ենթակայության այլ կազմակերպություններ:

2. ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱԾԽԱՏԱԿԱԿԱԶՄԸ

4. Մարզպետարանի աշխատակազմն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող պետական կառավարչական հիմնարկ է, որը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, ենթակա է հաշվառման իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից:

5. Մարզպետարանի աշխատակազմի նպատակն ու խնդիրը Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովումն է, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին մարզպետի մասնակցությունը:

6. Մարզպետի աշխատակազմը գործում է Հայաստանի Հանրապետության օրենքների ու այլ իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

7. Մարզպետարանի աշխատակազմն իր իրավասության սահմաններում Հայաստանի Հանրապետության անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

8. Մարզպետարանի աշխատակազմն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

9. Մարզպետարանի աշխատակազմն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

10. Մարզպետարանի աշխատակազմը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Մարզպետարանի աշխատակազմի կատարած գործունեությունների և մատուցած ծառայությունների համար կարող է գանձվել միայն պետական տուրք՝ օրենքով սահմանված չափով և կարգով:

11. Մարզպետարանի աշխատակազմն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է գանձապետական համակարգի միջոցով: Մարզպետարանի աշխատակազմի պահպանման կարիքների համար, ինչպես նաև մարզպետի լիազորությանը վերապահված բյուջետային ծրագրերի շրջանակներում գնումները կատարվում են «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

12. Մարզպետարանի աշխատակազմի պարտավորությունների համար պատասխանատվությունը կրում է Հայաստանի Հանրապետությունը:

13. Մարզպետարանի աշխատակազմի անվանումն է՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմ:

14. Մարզպետարանի աշխատակազմի գտնվելու վայրն է՝ քաղ. Արտաշատ, Օգոստոսի 23-ի փող. N 60:

3. ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱԾԽԱՏԱԿԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

15. Մարզպետարանի աշխատակազմի կառավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունն ու մարզպետը՝ օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում: Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարումն իրականացնում է մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը:

16. Մարզպետն ունի տեղակալ (տեղակալներ), որը՝

ա) համակարգում է մարզպետարանի աշխատանքները՝ մարզպետի կողմից իրականացվող քաղաքականության՝ իրեն հանձնարարված բնագավառում:

բ) իր լիազորությունների սահմաններում համակարգում է մարզպետին վերապահված բնագավառում քաղաքականության ապահովման համար անհրաժեշտ՝ մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով իրականացվող աշխատանքները՝ տարվ գուցումներ և հանձնարարականներ:

գ) մարզպետարանի աշխատակազմի նպատակներին և խնդիրներին համապատասխան իրականացնում է իրեն հանձնարարված բնագավառի՝ մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումներին կոնկրետ տրվող հանձնարարականների ու առաջադրանքների սահմանում, դրանց կատարման նկատմամբ վերահսկողություն:

դ) մարզպետի հանձնարարությամբ իրականացնում է մարզպետի մոտ քննարկվելիք հարցերի նախնական քննարկումները:

ե) համակարգում է իրեն հանձնարարված բնագավառներում մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների կողմից իրականացվող աշխատանքների մասնագիտական ուսումնասիրությունները և աշխատանքների ընթացքի օպերատիվ վերլուծությունը:

զ) իր լիազորությունների սահմաններում համագործակցում է պետական կառավարման և այլ մարմինների, կազմակերպությունների ու հիմնարկների հետ:

է) իրեն հանձնարարված բնագավառներում համակարգում է համապատասխան զարգացման ծրագրերի մշակումը և իրականացումը:

ը) մարզպետին պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն իր կողմից համակարգվող բնագավառներում տիրող իրավիճակի մասին:

թ) ապահովում է իր կողմից համակարգվող բնագավառներում մարզպետի կարգադրությունների ու որոշումների կատարման նկատմամբ վերահսկողությունը և արդյունքների մասին տեղեկացնում մարզպետին:

ժ) մարզպետին և աշխատակազմի ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ նրանց իրավասությանը վերապահված հարցերի վերաբերյալ:

ժա) մարզպետի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառնություններ:

17. Մարզպետն ունի երեք խորհրդականներ և երկու օգնականներ, որոնց միջև պարտականությունների բաշխումը կատարում է մարզպետը: Մարզպետի խորհրդականներին և օգնականներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է մարզպետը:

(17-րդ կետը փոփ. 01.06.06 թիվ 742-Ն, 06.04.16 թիվ 365-Ն որոշումներ)

18. Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

ա) վերակազմակերպում և դադարեցնում է մարզպետարանի աշխատակազմի գործունեությունը:

բ) հաստատում է մարզպետարանի կանոնադրությունն ու դրանում կատարվող փոփոխությունները:

գ) որոշում է մարզպետարանի աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը:

դ) հաստատում է մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքը:

ե) իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով Հայաստանի Հանրապետության կառավարությանը վերապահված այլ լիազորություններ:

19. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարն օրենքով, այլ իրավական ակտերով, մարզպետի որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է մարզպետարանի աշխատակազմի ընթացիկ գործունեությունը և կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության կառավարության և մարզպետի որոշումների, սույն կանոնադրության պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

20. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարն օրենքով սահմանված կարգով գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով պետությանը պատճառված գույքային վնասի համար: Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառված նյութական վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

21. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը պարտավոր է չկատարել հիմնադրի, մարզպետի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումներն ու կարգադրությունները:

22. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի բացակայության կամ պաշտոնական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրան փոխարինում է նրա տեղակալը կամ, օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ պաշտոնատար անձ՝ մարզպետի որոշմամբ:

23. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը՝

ա) իր իրավասության սահմաններում, առանց լիազորագրի, հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից և ներկայացնում նրա շահերը, իր լիազորությունների սահմաններում դատարանում հանդես է գալիս որպես հայցվոր կամ պատասխանող, տալիս է լիազորագրեր՝ դատարանում գործը վարելու և դատավարական այլ գործողություններ իրականացնելու համար:

բ) օրենքով, այլ իրավական ակտերով հիմնադրի և սույն կանոնադրություններով սահմանված կարգով տնօրինում է մարզպետարանի աշխատակազմին ամրացված պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները:

գ) իր իրավասության սահմաններում տալիս է Հայաստանի Հանրապետության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր:

գ.1) ապահովում է աշխատակազմում քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան՝ անձնակազմի կառավարման հետ կապված գործառնությունների իրականացումը:

դ) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված իր լիազորությունների սահմաններում աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է մարզպետարանի աշխատակազմի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ:

ե) օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ:

ե.1) մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստն է:

զ) մարզպետի հաստատմանն է ներկայացնում մարզպետարանի աշխատակազմի տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, այդ թվում՝ ապահովում է մարզպետարանի աշխատակազմի հաշվապահական հաշվառում վարելը,

Ֆինանսական հաշվետվություններ կազմելը և ներկայացնելը, ինչպես նաև մարզպետարանի աշխատակազմի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը, տարեկան ֆինանսական հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը, միջոցներ է ձեռնարկում ստուգումների արդյունքում հայտնաբերված ֆինանսական խախտումների վերացման համար:

ե) մարզպետին ներկայացնում է առաջարկություններ մարզպետարանի աշխատակազմի գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ:

ը) կազմակերպում է մարզպետարանի բյուջեի նախագծի նախապատրաստական աշխատանքները և ապահովում բյուջետային միջոցների ծախսերի կատարումը:

թ) կազմակերպում է մարզպետարանում քննարկումների և խորհրդակցությունների անցկացումը:

ժ) վերահսկում է մարզպետարանի աշխատակազմի կողմից՝ սահմանված ժամկետներում աշխատանքների կատարման ընթացքը:

ժա) մարզպետի ստորագրության է ներկայացնում մարզպետի որոշումների և կարգադրությունների նախագծերը:

ժբ) ապահովում է համագործակցությունը Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմինների աշխատակազմի հետ:

ժգ) կազմակերպում է մարզպետարանում գործավարության և տեխնիկական սպասարկման աշխատանքները:

ժդ) իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

(23-րդ կետը փոփ. 07.12.06 թիվ 1751-Ն, 10.12.09 թիվ 1424-Ն որոշումներ)

24. Մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստը ղեկավարում է մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական ու հաշվապահական ծառայությունները, գործում է մարզպետի անմիջական ղեկավարությամբ և իրականացնում «Գանձապետական համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով իր վրա դրված լիազորությունները:

(24-րդ կետը փոփ. 10.12.09 թիվ 1424-Ն որոշում)

25. Մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստը պատասխանատու է հաշվապահական հաշվառումը վարելու, մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական (բյուջետային), հարկային, վիճակագրական, պարտադիր վճարների մասին հաշվետվությունները ժամանակին կազմելու համար:

4. ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՃԽԱՏԱԿԱԿԱՉՄԻ ԳՈՒՅՔԸ

26. Մարզպետարանի աշխատակազմի գույքը ձևավորվում է օրենքով սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության անունից մարզպետարանի աշխատակազմի կնքած գործարքների միջոցով ձեռք բերված և աշխատակազմի տիրապետմանը, տնօրինմանը և օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից (ներառյալ գույքային իրավունքները), որը հաշվառվում է նրա հաշվեկշռում:

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ մարզպետարանի աշխատակազմին կարող է վերապահվել նաև պետական բաժնետոմսերի կամ բաժնեմասերի տիրապետման իրավասություն:

27. Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրավունք ունի ցանկացած ժամանակ վերցնելու մարզպետարանի աշխատակազմի գույքը:

28. Մարզպետարանի աշխատակազմն իրավունք ունի օրենքով, այլ իրավական ակտերով և իր կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, իր գործունեության նպատակներին ու գույքի նշանակությանը համապատասխան օգտագործելու, տիրապետելու և տնօրինելու իրեն հանձնված գույքը:

5. ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՃԽԱՏԱԿԱԿԱՉՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

29. Մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքում ներառվում են նրա կառուցվածքային ստորաբաժանումները (վարչություններ, բաժիններ, քարտուղարություն):

(29-րդ կետը փոփ. 25.02.2021 թիվ 251-Ն որոշում)

30. Մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատվում են մարզպետի կողմից:

(30-րդ կետը փոփ. 25.02.2021 թիվ 251-Ն որոշում)

6. ՀԱԾՎԱԳՎԱԿԱՆ ՀԱԾՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱԾՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

31. Մարզպետարանի աշխատակազմը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և համապատասխան մարմիններ է ներկայացնում ֆինանսական, հարկային, մաքսային, պարտադիր վճարների վիճակագրական հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:

32. Մարզպետարանի աշխատակազմի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների

հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

7. ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱԾԽԱՏԱԿԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԿԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

33. Մարզպետարանի աշխատակազմի վերակազմակերպման և նրա գործունեության դադարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
կառավարության 2002 թվականի
սեպտեմբերի 19-ի N 1791-Ն որոշման

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱԾԽԱՏԱԿԱԿԱԶՄԻ

I. Կառուցվածքային ստորաբաժանումներ

1. Վարչություններ

Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություն

Քաղաքաշինության վարչություն

Գյուղատնտեսության և քնապահպանության վարչություն

Կրթության, մշակույթի և սպորտի վարչություն

Առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն

Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչություն

2. Քարտուղարություն

3. Բաժիններ

Իրավաբանական բաժին

Չարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժին Հողաշինության և հողօգտագործման բաժին - մարզային հողային պետական տեսչություն Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին Անձնակազմի կառավարման բաժին Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին Չորահավաքային նախապատրաստության բաժին

II. Առանձնացված ստորաբաժանումներ

(II բաժինն ուժը կորցրել է 25.02.2021 թիվ 251-Ն որոշում)

(կառուցվածքը փոփ. 27.10.05 թիվ 1833-Ն, 29.06.06 թիվ 928-Ն, 07.12.06 թիվ 1751-Ն, 20.09.07 թիվ 1083-Ն, 02.04.09 թիվ 329-Ն, 10.06.10 թիվ 718-Ն, 29.03.12 թիվ 365-Ն, 06.02.14 թիվ 105-Ն, 04.06.15 թիվ 582-Ն, 05.10.17 թիվ 1233-Ն, 26.12.2019 թիվ 1944-Ն, 25.02.2021 թիվ 251-Ն որոշումներ)

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության
կառավարության 2002 թվականի
սեպտեմբերի 19-ի N 1791-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱԾԽԱՏԱԿԱԿԱԶՄԻՆ ՀԱՆՁՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ ԿԱԶՄԸ ԵՎ ՉԱՓԸ

NN	Գույքի անվանումը	Քանակը	Չափվելու շաղիկի արժեքը (դրամ)
ը/կ			
1	2	3	4
1.	Մարզպետարանի վարչ. շենք	1	26275541

2.	Դահլիճ և բուժետ	1	18468000
3.	ԼԳ բաժնի շենք, քաղ. Վեդի	1	11559000
4.	ԼԳ բաժնի շենք, քաղ. Մասիս	1	2128207
5.	ԱՎԿ շենք, քաղ. Մասիս	1	177983
6.	Հաշվ. քննչական շենք, քաղ. Մասիս	1	248267
7.	Ավտոտնակներ	13	623077
8.	Սարգսյան ճանապարհներ	306	199453700
9.	«ԳԱԶ»-24-10 ավտոմեքենա	1	112458
10.	«ԳԱԶ»-24-10 ավտոմեքենա	1	256172
11.	«ԳԱԶ»-24-10 ավտոմեքենա	1	115408
12.	«ԳԱԶ»-24-10 ավտոմեքենա	1	115408
13.	«ԳԱԶ»-24-10 ավտոմեքենա	1	198475
14.	«ՎԱԶ»-21-07 ավտոմեքենա	1	751718
15.	«ԳԱԶ»-31-02 ավտոմեքենա	1	906247
16.	«ՎԱԶ»-21-07 ավտոմեքենա	1	751718
17.	Օդափոխիչ BK-1500	26	421122
18.	Օդափոխիչ BK-2500	17	304589
19.	Սառնարան «Սնայգե»	4	53442
20.	Սառնարան «Չիլ»	1	19232
	Ընդամենը		798385
21.	Սառնարան «Ախստ»	1	25460
22.	Սառնարան «Ապշերոն»	1	22468
23.	Սառնարան «Օրսկ»	1	29468
24.	Սառնարան «Կողրի»	1	19232
25.	Հեռուստացույց «Շիվակի»	1	189000
26.	Հեռուստացույց «Սամսոն»	1	376000
27.	Հեռուստացույց «Գորիզոն»	1	63714
28.	Հեռուստացույց «Սլավոնտիչ»	1	5121

29.	Քեռուստացույց «Էլեկտրոնիկա»	1	24967
30.	Քեռուստացույց «Փանասոնիկ»	1	189000
31.	Երաժշտական կենտրոն	2	62098
32.	Գրամեքենա «Օպտիմա»	4	198092
33.	Գրամեքենա «Յատրան»	4	36132
34.	Գրամեքենա՝ գերմանական	1	9570
35.	Գրամեքենա՝ մեխանիկական	1	21546
36.	Գրամեքենա «Ռոբոտրոն»	1	8849
37.	Գրամեքենա «Ռոբոտրոն»	2	84635
38.	Գրամեքենա «Լիստվիցա»	1	49523
39.	Գրամեքենա «Դարո-208»	1	49523
40.	Սելեկտոր	5	553397
41.	Տեսախցիկ «Փանասոնիկ»	1	400000
42.	Էլեկտրական տաքացուցիչ	1	52000
43.	Զերմատաքացուցիչ	47	235940
44.	Պատճենահանող մեք. 84-230	1	319440
45.	Համակարգիչ	1	420000
46.	Համակարգիչ	1	479086
47.	Տպիչ	2	95202
48.	Համակարգիչ, պրոցեսոր, ստեղնաշար, մկնիկ, մոնիտոր	2	983680
49.	Տպիչ	1	416050
50.	ZIP Drive	1	60950
51.	Կայունացուցիչ UN-9600	2	96460
52.	Սառնարան (մարզպետի) Ընդամենը		5528373
53.	Անջատիչ 2 PC-1 prn	1	9540
54.	Ֆաքս	1	140450

55.	Ծրագրերի փաթեթ Win 98	1	60950
56.	Ծրագրերի փաթեթ Office 97	1	214650
57.	Ֆոտոկոպիա (քսերոքս)	1	424000
58.	Լախասրահի կահույժ՝ 3 կտորից	2	489450
59.	Գորգ (2x3)	6	87912
60.	Գորգ «ԷրեբոԼնի»	1	32298
61.	ՈՒղեգորգ	15	125280
62.	Կտավ «Արևածագ»	1	50000
63.	Կտավ «Կոմիտաս»	1	66464
64.	Երկաթյա պահարան	74	626854
65.	Գծագրական սեղան	3	75000
66.	Գրասեղան՝ դիրեկտորական	1	75080
67.	Գրասեղան՝ դիրեկտորական	20	553851
68.	Խորհրդակցության սեղան	7	123143
69.	Լիստերի սեղան՝ 4 կտորից	1	11542
70.	Գրասեղան՝ 1 պահարանիկով	37	122777
71.	Գրասեղան՝ 2 պահարանիկով	59	715198
72.	Գրասեղան՝ փոքր	12	119496
73.	Բազմոց	2	20550
74.	Սեղան՝ բուժետի	6	36000
75.	Էկրան	1	50000
76.	Հանդերձապահարան	4	217672
77.	Գրապահարան	50	489400
78.	Լիստերի սեղան	3 (1	11542
		լրակազմ)	
79.	Կահույժ՝ համալիր	1	184680
80.	Կահույժ՝ համալիր	1	630000
81.	Գրապահարան՝ համալիր	1	24092
82.	Պատ լրակազմ	4	648828

83.	Պահարան` շքեղ	3	67350
84.	Կահույք- հանդերձարան	1	38090
85.	Օդափոխիչ («Սամսունգ») մարզ.	1	
86.	Ռադիոբարձրախոս «Կարպ»	30	155220
87.	Ռադիոբարձրախոս «Յրագղ»	4	32016
88.	Աթոռ` բուժետի	12	18000
89.	Զարտեգ-մակետ	1	22952
90.	Էլ. տաքացուցիչ «Կամին»	1	500
91.	Ամբիոն	1	6117
92.	Վարագույր` դահլիճի	4	10000
93.	Յեռատիպ անօգտ.	1	
94.	Վարագույր` թավշյա	1	18000
95.	Բարձրախոս	1	15000
96.	Միկրոֆոն	2	10000
97.	Սեղանի ժամացույց	1	11520
98.	Պատի ժամացույց	1	1049
99.	Լուսանկարչական ապարատ	1	6000
100.	Մագնիտոֆոն «Էլեկտրոնիկ»	1	17695
101.	Փոշեծծիչ	1	60000
102.	Փայլացուցիչ	1	12000
103.	Աղբաման	3	30000
104.	Լոգարանի լրակազմ 4 կտ.	2	2050
105.	Յայելի	1	10000
106.	Կախիչ	35	70315
107.	Աթոռ` կիսափափուկ, նոր	20	580200
108.	Աթոռ` կիսափափուկ, նոր	20	260000
109.	Աթոռ	3	157513
110.	Աթոռ` փափուկ	95	35530

111.	Աթոռ՝ չոր	23	966
112.	Աթոռ՝ կիսափափուկ	258	297990
113.	Բազկաթոռ՝ կաշեպատ	2	70000
114.	Բազկաթոռ՝ կաշեպատ	1	30000
115.	Բազկաթոռ՝ կաշեպատ	1	35000
116.	Բազկաթոռ՝ կիսափափուկ	4	24468
117.	Բազկաթոռ	2	12234
118.	Բաժնաչափիչ (անօգտագործ.)	3.22	29624
119.	Դահլիճի պթոռ	76	239704
120.	Էլեկտրական ջահ	13	30589
121.	Էլեկտրական ջահ	27	30589
122.	Ջեռախոսի ապարատ առանց համարի	27	
123.	Ջեռախոսի ապարատ	5	42500
124.	Ջեռախոսի ապարատ	2	12000
125.	Ջեռախոսի ապարատ	1	5000
126.	Ջեռախոսի ապարատ	4	24000
127.	Ջեռախոսի ապարատ	15	75000
128.	Ջեռախոսի ապարատ	6	42000
129.	Ջեռախոսի ապարատ	2	16800
130.	Ջեռախոսի ապարատ	42	108780
131.	Ջաշվիչ մեքենա	3	19100
132.	Ջաշվիչ մեքենա	3	9000
133.	Երիզ	75	96825
134.	Երիզ	1	4400
135.	Երիզ	1	4000
136.	Երիզ	4	12000
137.	Երիզ	1	3500
138.	Վարագուլ յր	10	180000

139.	Վարագուշր	59	359015
140.	Դուշլ	1	13200
141.	Շամպայնի մեծ բաժակ	1	8200
142.	Սկուտեղ՝ թխվածքի	2	13200
143.	Սկուտեղ՝ մրգի	3	63000
144.	Ափսե՝ միջին չափի	25	8750
145.	Դանակ	14	7700
146.	Պատառաքաղ	14	7700
147.	Սկուտեղ	2	11800
148.	Սփռոց	2	6000
149.	Աղաման	1	1400
150.	Սկուտեղ՝ օվալաձև	3	9000
151.	(151-րդ տողը հանվել է 29.06.06 թիվ 928-Ն որոշում)		
152.	Վեդու սոցիալական աջակցության տարածքային գործակալության գուշք		2139000
153.	Արտաշատի սոցիալական աջակցության տարածքային գործակալության գուշք		2232700
154.	Մասիսի սոցիալական աջակցության տարածքային գործակալության գուշք		795300
	Ընդամենը		291838075

(3-րդ հավելվածը փոփ. 04.06.15 թիվ 582-Ն որոշում)